

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2009 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2009 թվականին ՀՀ ԱԳՆ-ն շարունակել է իրականացնել Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից նախանշած արտաքին քաղաքականության ուղեգիծը, ինչը բնորոշվել է նոր նախաձեռնություններով:

Նախարարության աշխատանքներն ուղղված են եղել երկրի արտաքին անվտանգության ամրապնդմանը, պետության զարգացման արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումների ներկայացմանը, արտերկրում Հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ եւ գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը, ինչպես նաև հարաբերությունների կարգավորմանը այն երկրների հետ, որոնց հետ գոյություն ունեն խնդիրներ:

Արտաքին քաղաքական կարևոր ձեռքբերումներից է Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացումը և միջազգային հանրության կողմից Հայաստանի դիրքորոշումների ընկալումն ու աջակցությունը, ինչը մասնավորապես դրսևորվել է.

- Լեռնային Ղարաբաղի կարգավորման բանակցային գործընթացին առնչվող համանախագահող երկրների և ԵԱՀԿ բոլոր 56 երկրների կողմից աթենքյան հայտարարություններում, որտեղ առաջին անգամ ամրագրվեց ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը և բազմաթիվ փաստաթղթերում առավել շեշտվեց ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքի կարևորությունը,
- ՀԱՊԿ և ՄՕՏՀԿ Հայաստանի արդյունավետ նախագահությամբ: ՀԱՊԿ շրջանակներում ընդունված որոշումներն ի նպաստ են մեր երկրի անվտանգության առավել ամրապնդմանը,
- Հայաստանի նախաձեռնությամբ սկզբնավորված հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում, որն արժանացավ միջազգային հանրության ամենալայն հավանությանը:

2009 թ. տեղի են ունեցել բազմաթիվ փոխայցելություններ, քաղաքական խորհրդատվություններ, հանդիպումներ եվ միջոցառումներ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ, կնքվել են շուրջ 100 միջազգային պայմանագրեր:

ՀՀ Նախագահը կատարել է 22 օտարերկրյա այցելություն, Հայաստան են այցելել այլ երկրների 8 ղեկավարներ: ԱԺ նախագահը կատարել է 8 այցելություն, Հայաստան են այցելել երկու երկրի խորհրդարանի ղեկավարներ: Վարչապետը կատարել է 8, ԱԳ նախարարը՝ 29 այցելություն, Երևան են ժամանել 11 երկրների արտգործնախարարներ, 5 միջազգային կազմակերպությունների ղեկավարներ:

Հաշվետու տարում հիմնադրվեց ԱԳՆ դիվանագիտական դպրոցը:

Արտգործնախարարության կողմից կազմակերպվել են շուրջ հարյուր հարցազրույցներ աշխարհի առաջատար լրատվամիջոցներին, ելույթներ բազմաթիվ միջազգային համաժողովներում, քաղաքագիտական կենտրոններում: Հայաստանի վերաբերյալ հողվածներ, հատուկ թողարկումներ եւ ներդիրներ են հրապարակվել աշխարհի հեղինակավոր պարբերականներում:

Երևանում և արտասահմանյան ուղևորությունների ընթացքում արտգործնախարարը մասնակցել է շուրջ 4 տասնյակ մամուլի ասուլիսների, 20 ավելի հարցազրույց է տվել աշխարհի առաջատար լրատվամիջոցներին:

ԱԳ նախարարության համակարգում 2009 թ. շրջանառվել է 100.000-ից ավելի փաստաթուղթ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Հավատարիմ մնալով արտաքին քաղաքականության իր սկզբունքներին, Հայաստանի քաղաքական ղեկավարությունը 2009 թ. շարունակել է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում և Մադրիդյան առաջարկությունների հիման վրա արցախյան հիմնախնդիրը բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու ուղեգիծը, միաժամանակ մշտապես ընդգծելով գործընթացին արցախյան կողմի լիիրավ մասնակցության անհրաժեշտությունը:

2009թ. արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը նշանավորվեց ինտենսիվ բանակցություններով. Հայաստանի և Ադրբեջանի նախագահների մակարդակով ՌԴ նախագահի միջնորդությամբ տեղի ունեցան 3, իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ 6 հանդիպումներ: Տարվա ընթացքում արձանագրված դրական դինամիկան բավարար չէրավ բանակցային գործընթացում բեկում արձանագրելու համար:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առաջնային խնդիրներ են հանդիսացել ԼՂՀ կողմից իրականացրած ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը, ԼՂ ժողովրդի բազմաշերտ անվտանգության ապահովումը:

Անցած տարի Հայաստանը հակազդել է Ադրբեջանի շարունակական փորձերին հարցն աղավաղված կերպով ներկայացնել միջազգային մի շարք կազմակերպություններում, մասնավորապես՝ ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում և Եվրոպայի Խորհրդում: Հայկական կողմը հուշագրեր և այլ փաստաթղթեր է տարածել այդ մարմիններում, համապատասխան ատյաններում տեղի են ունեցել բազմաթիվ բացատրական և տեղեկատվական բնույթի հանդիպումներ միջազգային կազմակերպությունների ղեկավարության հետ:

2009-ի հուլիսին Իտալիայի լ'Աքուիլա քաղաքում կայացած Մեծ Ութնյակի գագաթաժողովին ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների ԱՄՆ, Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահներ Բարաք Օբաման, Դմիտրի Մեդվեդևը և Նիկոլա Սարկոզին հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որով Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին կոչ արեցին կարգավորել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խաղաղ ճանապարհով և իրենց աջակցությունը հայտնեցին կարգավորման հիմնական սկզբունքների մշակմանն ուղղված կողմերի ջանքերին:

2009-ի դեկտեմբերի 1-2-ին Աթենքում Ղարաբաղյան հարցի վերաբերյալ հայտարարություն ընդունվեց ԵԱՀԿ անդամ 56 երկրների ԱԳ նախարարների կողմից, որտեղ առաջին անգամ ամրագրվեց ազգերի ինքնորոշման սկզբունքը և ևս մեկ անգամ շեշտվեց ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքի կարևորությունը:

Նույն օրերին, Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները՝ ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Բեռնար Կուշները և Միացյալ Նահանգների պետքարտուղարի տեղակալ Ջեյմս Սթայնբերգը, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանը և Էլմար Մամեդյարովը հանդես եկան համատեղ համանման հայտարարությամբ:

Տարվա ընթացքում ոչ մի միջազգային կազմակերպություն, բացի Իսլամական կոնֆերանս կազմակերպությունից, չի ընդունել Լեռնային Ղարաբաղի կարգավորմանն առնչվող հայկական կողմի դիրքորոշմանը հակասող որևէ բանաձև:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Բազմաբովանդակ և լայնածավալ համագործակցություն է իրականացվել մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ: Տեղի են ունեցել շուրջ մեկ տասնյակ հանդիպումներ երկու երկրների բարձրագույն ղեկավարների միջև: Երկուստեք քայլեր են ձեռնարկվել հարաբերությունների առավել խորացման և ամրապնդման, նոր ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ:

2009թ. շարունակվել է բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը, կայացել է Հայաստանի և Ռուսաստանի Նախագահների 8 հանդիպում (Մոսկվա՝ 17 հունվարի, Մոսկվա՝ 4-5 փետրվարի, Մոսկվա՝ 23 ապրիլի, Սանկտ Պետերբուրգ՝ 23 ապրիլի, Մոսկվա՝ 18 հունիսի, Քիշին՝ 10 հոկտեմբերի, Մոսկվա՝ 12 հոկտեմբերի, Ալմաթի՝ 12 դեկտեմբերի), Հայաստանի Հանրապետության Նախագահի հանդիպումը վարչապետ Պուտինի հետ (Դավոս՝ 29 հունվարի), որոնք նոր լիցք են հաղորդել հայ-ռուսական համագործակցությանը:

2009-ին Նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց ՌԴ Օրենսդրի (3 օգոստոսի), Ռոստովի (7 հոկտեմբերի) և Կալինինգրադի (12 նոյեմբերի) մարզեր:

2009-ի փետրվարի 27-ին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն այցելեց Մոսկվա: Այցելության ընթացքում հանդիպումներ կայացան ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի, հայ-ռուսաստանյան միջակառավարական հանձնաժողովի համանախագահ, ՌԴ տրանսպորտի նախարար Իգոր Լևիտինի հետ:

2009թ. սեպտեմբերի 24-25-ը Յարոսլավլ քաղաքում կայացավ ՀՀ և ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստը, որին մասնակցել է ՀՀ պատվիրակությունը՝ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ:

Մարտի 25-28-ը ՀՀ ԱԺ պատվիրակությունը Մոսկվայում մասնակցեց հայ-ռուսական Միջխորհրդարանական հանձնաժողովի նիստին:

2009թ. ապրիլի 16-17-ը ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը աշխատանքային այցով եղել է Հայաստան եւ հանդիպումներ է ունեցել ՀՀ Նախագահի և ԱԳ նախարարի հետ:

Հունիսի 14-ին Մոսկվայում կայացել է արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ: Տարվա ընթացքում արտգործնախարարների մակարդակով կայացել է եւս 6 հանդիպում:

Ռուսաստանը, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելու նպատակով Հայաստանին տրամադրեց 500 մլն ԱՄՆ դոլարի չափով կայունացման վարկ: Հաշվետու տարում զգալիորեն ակտիվացել է Հայաստանի մարզերի և Ռուսաստանի սուբյեկտների միջև համագործակցությունը: Հայ-ռուսական հարաբերությունները շարունակել են ակտիվորեն զարգանալ գիտության, կրթության, մշակութային ոլորտներում:

Ռուսաստանը շարունակում է իր ակտիվ դերակատարությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հանգուցալուծման բանակցություններում՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ: ՌԴ Նախագահի միջնորդությամբ տեղի են ունեցել Հայաստանի և Ադրբեյջանի Նախագահների 3 հանդիպումներ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը, կարևորելով Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների առավել ամրապնդումը, հետամուտ է եղել ԱՄՆ հետ բարեկամական գործընկերության զարգացմանն ու համագործակցության ընդլայնմանը:

Զգալիորեն ընդլայնվել են քաղաքական շփումները երկու երկրների բարձրագույն ղեկավարության միջև՝ կայացել են Նախագահ Սերժ Սարգսյանի հեռախոսազրույցները Նախագահ Բարաք Օբամայի, փոխնախագահ Ջո Բայդենի եւ պետքրատուղար Հիլարի Քլինթոնի հետ:

2009թ. մայիսին Միացյալ Նահանգներ կատարած այցելության ընթացքում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել պետքարտուղար Հիլարի Քլինթոնի, նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյմս Ջոնսի, Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանի, Կոնգրեսի մի շարք անդամների հետ: Արտգործնախարարների միջև ևս հանդիպումներ են տեղի ունեցել նաև Նյու-Յորքում՝ սեպտեմբերի 28-ին եւ Ցյուրիխում՝ հոկտեմբերի 10-ին:

Ապրիլի 6-ին Ստամբուլում ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման կարճատեւ զրույց է ունեցել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

ԱՄՆ պետքարտուղարությունից Հայաստան են այցելել մի շարք բարձրաստիճան պատվիրակություններ:

2009-ի նոյեմբերին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ղեկավարած պատվիրակությունը մասնակցել է Կալիֆոռնիայի Սիլիկոնային հովտում Սան Խոսե քաղաքում կայացած «Արմթեք» համաժողովին:

2009-ի մայիսին Երևանում, իսկ նոյեմբերին Վաշինգտոնում տեղի ունեցան հայ-ամերիկյան առևտրատնտեսական հարաբերությունները կանոնակարգող հանձնաժողովի հերթական նստաշրջանները՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի համանախագահությամբ:

2010թ. ֆինանսական տարվա համար ԱՄՆ Կոնգրեսը Հայաստանին հատկացրեց 48 մլն. ԱՄՆ դոլար, ռազմական համագործակցության համար՝ 3 մլն. 450 հազ. ԱՄՆ դոլար, իսկ Լեռնային Ղարաբաղին՝ 8 մլն. ԱՄՆ դոլար:

ԱՄՆ շարունակում է իր ակտիվ դերակատարությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հանգուցալուծման բանակցություններում՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ:

ԵՎՐՈՊԱ

Շարունակվել է Եվրոպային մերձենալու արտաքին քաղաքական ուղեգիծը, եւ համագործակցության խորացումը՝ ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ Եվրոպական կառույցների շրջանակներում: Հայաստանը միացել է ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրին: Ընդլայնվել է Հայաստանի համագործակցությունը Եվրոպական մայրցամաքի մեր ավանդական գործընկերների հետ, նոր լիցք է հաղորդվել հարաբերություններին արեւելաեվրոպական պետությունների, բայթյան եւ սկանդինավյան երկրների հետ:

Եվրոպական Միություն

Վերջին տարիների դինամիկ զարգացող քաղաքական երկխոսությունը ԵՄ հետ որակական նոր մակարդակ ստացավ 2009-ի մայիսին Պրահայում մեկնարկած Արևելյան գործընկերության նախաձեռնությամբ, որը կոչված է լրացնելու Եվրոպական հարևանության քաղաքականությունը: ԵՄ

հետ հարաբերություններում Հայաստանը կարևորում է բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը, նոր պայմանագրային հարաբերություններ հաստատելուն ուղղված աշխատանքները:

Մայիսի 7-ին Պրահայում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Արևելյան գործընկերություն նախաձեռնությանը նվիրված գագաթաժողովին: Գործընկերության նախաձեռնությունը Հայաստանի համար ստեղծում է Եվրոպական Միության հետ քաղաքական, տնտեսական և հումանիտար հարթություններում նոր, ավելի խորացված և որակապես ավելի բարձր համագործակցության լրացուցիչ հնարավորություններ:

Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցությունը իրականացվում է չորս թեմատիկ պլատֆորմներով. 1) ժողովրդավարություն, լավ կառավարում և կայունություն, 2) տնտեսական ինտեգրում և համապատասխանեցում ԵՄ քաղաքականությանը, 3) էներգետիկ անվտանգություն և 4) մարդկային շփումներ:

2009թ. տեղի են ունեցել պլատֆորմների երկուական նիստեր և կոնկրետ ոլորտներում ընդունվել են 2009-11 թթ. համագործակցության աշխատանքային ծրագրեր: Նոյեմբերին Եվրահանձնաժողովի կողմից ԵՄ խորհրդին է ներկայացվել Հարավային Կովկասի երկրների հետ ասոցացման պայմանագիր կնքելու բանակցությունների մանդատի նախագիծ:

ՀՀ-ԵՄ Գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքները կանոնակարգելու նպատակով մայիսին ՀՀ Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է Եվրոպական կառույցների հետ համագործակցությունը Հայաստանի ներսում աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով և սահմանվել է Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի իրականացումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկ:

Հաշվետու տարվա հուլիսին Երևան էր ժամանել ԵՄ Եռյակի պատվիրակությունը՝ նախագահող երկրի՝ Շվեդիայի արտաքին գործերի նախարար Կառլ Բիլդտի գլխավորությամբ: Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՀՀ Նախագահի և արտգործնախարարի հետ:

Մեկտեմբերի 22-ին Երևանում կայացել է Հայաստան-Եվրամիություն համագործակցության կոմիտեի 10-րդ նիստը: Նիստի ընթացքում հայտարարվեց ՀՀ-ԵՄ համագործակցության նոր ենթակոմիտեների, այդ թվում «Արդարադատության, ազատությունների և անվտանգության» հարցերի ենթակոմիտեի ստեղծման մասին:

Հոկտեմբերի 26-ին Լյուքսեմբուրգում տեղի ունեցավ Հայաստան-Եվրամիություն համագործակցության խորհրդի հերթական նիստը: Հայկական պատվիրակությունը գլխավորում էր ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Բրյուսելում դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ Արևելյան գործընկերության նախաձեռնության պետությունների առաջին նախարարական հանդիպումը, որին մասնակցում էր ԱԳ նախարարի գլխավորած ՀՀ պատվիրակությունը: Դեկտեմբերի 9-ին տեղի ունեցան ԵՄ խորհրդի Քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտեի «տրոյկայի» մակարդակով Հայաստան-ԵՄ քաղաքական խորհրդակցությունները:

Տարվա ընթացքում Հայաստանի արտգործնախարարը պարբերաբար հանդիպումներ է ունեցել ԵՄ-ում նախագահող երկրների ԱԳ նախարարների, Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական խորհրդի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

2009թ. ապրիլից Հայաստանում իր աշխատանքը սկսեց ԵՄ խորհրդատուների խումբը, որի առաջնային նպատակն է աջակցել Հայաստանին կատարելու Եվրոպական հարևանության քաղաքականության Գործողությունների ծրագիրը:

Նոյեմբերին ԵՄ որոշում ընդունեց Հայաստանին տրամադրել 100 մլն եվրո մակրոֆինանսական աջակցություն: Դեկտեմբերին Երևանում կայացավ Մարդու իրավունքների շուրջ ԵՄ-Հայաստան երկխոսության առաջին հանդիպումը:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

Հունիսի 27-28-ը ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցեց Կորֆուում տեղի ունեցած ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը, որտեղ ներկայացրեց Հայաստանի տեսակետները Եվրոպայում անվտանգության ապահովման վերաբերյալ:

Հուլիսի 3-ին Հայաստան այցելեց ԵԱՀԿ գործող նախագահ, Հունաստանի ԱԳ նախարար Դորա Բակոյանին:

Դեկտեմբերի 1-2 –ը Աթենքում կայացած ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում Էդվարդ Նալբանդյանը հանդիպեց ԵԱՀԿ գործող նախագահ, Հունաստանի վարչապետ Յորդոս Պապանդրեուի եւ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերեն դե Բրիշամբոյի հետ:

2009-ի փետրվարին ՀՀ Նախագահը և արտգործնախարարը ընդունել են Հայաստանում գտնվող Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցով ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահի հատուկ ներկայացուցիչ Գյորան Լենմարկերին:

Դեկտեմբերի 1-2-ը Հայաստանի արտգործնախարարն Աթենքում մասնակցեց ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի 17-րդ նստաշրջանին և ներկայացրեց Հայաստանի դիրքորոշումները կազմակերպության առջև ծառայած խնդիրների և ԵԱՀԿ պատասխանատվության գոտում խնդիրների լուծման ուղիների վերաբերյալ:

Եվրոպայի Խորհուրդ

Հայաստան-Եվրոպայի Խորհուրդ համագործակցությունը 2009թ. ծավալվել է ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրում առաջնությունների մշակման, միջկառավարական կոմիտեներում ՀՀ փորձագետների ներգրավման, ԵՄ շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման և համագործակցության այլ ուղղություններով:

ԵՄ-ի հետ ընթացիկ տարում Հայաստանը մի շարք գործնական քայլեր է ձեռնարկել ԵՄԽՎ բանաձևերում ամրագրված առաջարկությունների և պահանջների կատարման ուղղությամբ: Խորհրդարանական վեհաժողովն իր թիվ 1677 բանաձևով (հունիսի 24-ին) որոշեց 2008 թ. մարտյան իրադարձություններից հետո Հայաստանի նկատմամբ իրականացվող հատուկ մոնիտորինգը փոխարինել ԵՄԽՎ շրջանակներում ընդունված սովորական ընթացիկ մոնիտորինգով:

2009 թ. մայիսին ՀՀ արտգործնախարար Նալբանդյանը Մադրիդում մասնակցեց ԵՄ նախարարների կոմիտեի 119-րդ նիստին, որը նշանավորում էր ԵՄ 60-ամյակը:

ԵՄԽՎ-ում Հայաստանի Ազգային Ժողովի պատվիրակությունը շարունակել է ակտիվորեն մասնակցել վեհաժողովի աշխատանքներին, ԵՄԽՎ հերթական նստաշրջանի աշխատանքներին մասնակցել է ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը:

Աթենքում կայացած ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում Էդվարդ Նալբանդյանը հանդիպեց Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղար Թյորնբյոր Յագլանդի հետ:

Եվրոպական երկրներ

2009թ. ընթացքում եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունները շարունակել են ինտենսիվ զարգացում ապրել տարբեր ուղղություններով, իրականացվել են բազմաթիվ փոխայցելություններ:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը այցելություններ է կատարել Շվեյցարիա, Գերմանիա, Չեխիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Հունգարիա: Հունվարի 29-30-ը Դավոսի համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում կայացել են ՀՀ Նախագահի հանդիպումները Շվեյցարական Համադաշնության Նախագահ Հանս Ռուդոլֆ Մերցի, Լիտվայի Նախագահ Վալդաս Ադամկուսի, Լատվիայի Նախագահ Վալդիս Զատլերսի հետ: Փետրվարի 6-8-ը Սյունիսենի Անվտանգության քաղաքականության հարցերով 45-րդ միջազգային համաժողովի շրջանակներում ՀՀ Նախագահը հանդիպել է ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելի հետ: Մայիսին Պրահայում կայացած ԵՄ «Արևելյան գործընկերության» զագաթաժողովի շրջանակներում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնի, Միացյալ Թագավորության ԱԳ նախարար Դեյվիդ Միլիբենդի հետ:

2009-ին Հայաստան են այցելել Սերբիայի Նախագահ Բորիս Տադիչը, Կիպրոսի Նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասը, Խորվաթիայի Նախագահ Ստյեպան Մեսիչը, Լատվիայի նախագահ Վալդիս Զատլերսը:

Եվրոպական երկրների հետ միջխորհրդարանական կապերի ամրապնդման տեսանկյունից կարևոր էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի այցը Լեհաստան, ինչպես նաև հոկտեմբերի 1-2-ը Բելգիայի Սենատի նախագահ Արման դը Դեկերի գլխավորած պատվիրակության այցելությունը Հայաստան:

Փետրվարի 23-25-ը աշխատանքային այցով Իտալիայում էր գտնվում ԱԱ խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը:

2009թ. տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական և աշխատանքային այցերը մի շարք եվրոպական երկրներ, այդ թվում՝ Լեհաստան, Շվեյցարիա, Չեխիա, Հունգարիա, Ռումինիա, Ֆրանսիա, Իտալիա, Վատիկան, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Իսպանիա և Հունաստան: Նախանշվել են հարաբերությունների ընդլայնման ուղիներն ու այդ նպատակով ձեռնարկվելիք քայլերը:

Ֆրանսիայի հետ համագործակցությունը շարունակել է խորանալ, տեղի է ունեցել ԱԳ նախարարների 3 հանդիպում: Ստորագրվել է դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջը վերացնելու մասին համաձայնագիր, որն առաջին քայլն է ԵՄ երկրների հետ վիզային ռեժիմի դյուրացման ճանապարհին: 2009թ. մարտի 12-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը և Փարիզի քաղաքապետ Բերտրան Դելանտեն Փարիզի կենտրոնում բացեցին Երևանի անունը կրող պուրակը:

Լուրջ զարգացում են ապրել Շվեյցարիայի հետ հարաբերությունները, որի միջնորդությամբ ընթանում էին հայ-թուրքական բանակցությունները: Տարվա ընթացքում տեղի են ունեցել արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների շուրջ մեկ տասնյակ հանդիպում, Շվեյցարիայում Հայաստանի դեսպան է նշանակվել Շառլ Ազնավուրը, Երևանում հիմնվել է Շվեյցարիայի մշտական դիվանագիտական ներկայացուցչություն, ստորագրվել է դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջը վերացնելու մասին համաձայնագիր:

2009թ. Հայաստան են այցելել Եվրոպական հանձնաժողովի Արտաքին հարաբերությունների և ԵՀՔ գծով հանձնակատարը, Շվեդիայի, Էստոնիայի, Հունաստանի, Լիտվայի, Սերբիայի, Կիպրոսի ԱԳ նախարարները, Գերմանիայի արտաքին գերատեսչության պետնախարարը, Լեհաստանի եվրաինտեգրման հարցերով պետքարտուղարը:

Միջազգային համաժողովների շրջանակներում տեղի են ունեցել Հայաստանի արտգործնախարարի հանդիպումները Իսպանիայի, Ավստրիայի, Շվեյցարիայի, Դանիայի, Սլովենիայի, Լիտվայի, Կիպրոսի, Չեխիայի, Ալբանիայի, Էստոնիայի, Սլովակիայի, Լեհաստանի, Լատվիայի, Ռումինիայի, Լյուքսեմբուրգի, Պորտուգալիայի, Հունգարիայի, Սերբիայի, Իռլանդիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների հետ:

Ֆրանսիան՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի կարգավիճակով շարունակել է ակտիվ ներգրավվածությունը արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում:

ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2009 թ. համագործակցությունը ԱՊՀ կառույցների շրջանակներում, ինչպես նաև կազմակերպության անդամ երկրների հետ շարունակել է մնալ ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը, ինչն արտահայտվել է Հայաստանի ակտիվ ու գործնական մասնակցությամբ ԱՊՀ բոլոր գործընթացներին՝ գազաթաժողովներին ու նիստերին: Հայաստանը՝ Հանրապետության Նախագահի, վարչապետի և արտգործնախարարի մակարդակներով մասնակցել է ԱՊՀ համապատասխան կառույցների աշխատանքներին:

Տարվա ընթացքում Նախագահ Սերժ Մարգարյանը այցելություններ է կատարել Բելառուս, Ղրղզստան, Մոլդովա և Ղազախստան, ուր հանդիպումներ է ունեցել այդ երկրների ղեկավարների հետ, քննարկել ԱՊՀ գործունեության և երկկողմ հարաբերությունների զարգացմանն առնչվող հարցեր:

Առաջընթաց է գրանցվել Բելառուսի հետ հարաբերություններում: 2009 թ. ընթացքում Հայաստան են այցելել Բելառուսի Նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն և արտգործնախարար Սերգեյ Մարտինովը: ԱԳ նախարարների հանդիպումներ են տեղի ունեցել նաև միջազգային համաժողովների շրջանակներում: Շարունակվել է համագործակցությունը Հայաստանի և Բելառուսի խորհրդարանների, ազգային անվտանգության խորհուրդների, ինչպես նաև տարբեր գերատեսչությունների միջև, տեղի է ունեցել առևտրատնտեսական հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստ:

Թուրքմենստանի հետ համագործակցությունը ևս զարգացում է ապրել: Պաշտոնական այցով Աշխաբադ է այցելել արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, որը հանդիպումներ է ունեցել Նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի, փոխվարչապետ, հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Խիդիր Սապարլևի, ինչպես նաև փոխվարչապետ և արտգործնախարար Ռաշիդ Մերեդովի հետ: Աշխաբադում տեղի ունեցավ հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը:

Հայաստանը աջակցել է Ղազախստանին 2010-ին ԵԱՀԿ նախագահությունը ստանձնելու գործում և պատրաստակամություն է հայտնել սատարել ԵԱՀԿ դազախստանյան նախագահության նախաձեռնությունները: 2009թ. մայիսին Երևանում կայացել է հայ-ղազախական միջկառավարական տնտեսական հանձնաժողովի 3-րդ նիստը: 2009-ի հուլիսին ղազախական կողմն իր համաձայնությունը հայտնեց ՂՀ և ՌԴ միջև Անգարսկում ուրանի հարստացման կենտրոնի ստեղծման պայմանագրին Հայաստանի միանալու վերաբերյալ:

Միջազգային համաժողովների շրջանակներում տեղի են ունեցել Հայաստանի արտգործնախարարի հանդիպումները Ղրղզստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ուկրաինայի և Մոլդովայի նախարարների հետ:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ

Հաշվետու տարում Հայաստանի և Վրաստանի միջև կայացել են մի շարք բարձրաստիճան շփումներ, այդ թվում՝ նախագահ Միխեիլ Մաակաշվիլիի պաշտոնական այցը Հայաստան (հունիսի 24-25-ը), Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեի այցերը Երևան փետրվարին և սեպտեմբերին, հունիսին Թբիլիսի այցելեց ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: Հայ-վրացական բարձրաստիճան շփումները շարունակվել են նաև միջազգային համաժողովի շրջանակներում:

Հայաստանի և Վրաստանի համագործակցությունն ուղղված է եղել հայ և վրացի ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների առավել ամրապնդմանը, Վրաստանի տարածքով անցնող ՀՀ քաղաքացիների, բեռնափոխադրումների, Հայաստան մատակարարվող բնական գազի ծավալների անխափան ապահովմանը, տնտեսական հարաբերությունների հետագա զարգացմանն ու խորացմանը:

Շարունակվել են աշխատանքները Բագրատաշենի սահմանակետում հաջորդ տարվա ընթացքում երկրորդ ավտոմոբիլային կամրջի կառուցման, քաղաքացիների և բեռների մաքսային սպասարկման գործընթացի դյուրացման, Երևան-Գյումրի-Ախալքալաք-Բաթումի ավտոճանապարհի վերակառուցման և երրորդ բարձրավոլտ հաղորդակցման գծի կառուցման ավարտի ուղղությամբ:

Շարունակվել է համագործակցությունը Վրաստանի իշխանությունների հետ վիրահայության կրթամշակութային խնդիրների լուծման ուղղությամբ:

ԻՐԱՆ

2009 թ. նշանավորվեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի այրիլի 13-14-ը Իրան կատարած պաշտոնական այցով, որի ընթացքում տեղի ունեցան կարևոր հանդիպումներ ու բանակցություններ ԻԻՀ հոգևոր առաջնորդ Մելեդ Ալի Խամենեիի, նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, Մեջլիսի նախագահի, Ազգային անվտանգության Գերագույն խորհրդի քարտուղարի, ինչպես նաև հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Այցի շրջանակներում ստորագրվեց ութ փաստաթուղթ:

Հաշվետու տարին ակնառու էր նաև հայ-իրանական միջխորհրդարանական կապերի ամրապնդման առումով. սեպտեմբերի 29-30-ը տեղի ունեցավ ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակության այցը Իրան: Այցի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ և բանակցություններ ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի, Ազգային անվտանգության Գերագույն խորհրդի քարտուղար Մայիդ Ջալիլիի հետ:

2009-ի մարտի 13-ին պաշտոնական այցով Հայաստան այցելեց ԻԻՀ ԱԳ նախարար Մանուչեիր Մոթթաքին:

Տրանսպորտային բնագավառին առնչվող, այդ թվում Հայաստան-Իրան երկաթուղու կառուցման վերաբերյալ քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ ղեկավարության և ԻԻՀ տրանսպորտի ու հաղորդակցությունների նախարար Համիդ Բեհբահանիի Երևան այցի ընթացքում:

Հաջողությամբ շարունակվել են հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքները:

Երկկողմ տնտեսական համագործակցության շրջանակներում օրակարգային հարցերից են երկու երկրները կապող երկաթուղու կառուցման, Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման 3-րդ գծի և Արաքս գետի վրա համատեղ ՀԷԿ-երի շինարարության նախագծերը, համագործակցության ընդլայնումը նավթի և նավթաքիմիայի բնագավառներում, այդ թվում Հայաստանի տարածքում հեղուկ վառելիքի պահեստարանի կառուցումը:

ԹՈՒՐՔԻԱ

2009 թ. ընթացքում շարունակվեցին 2008թ. սեպտեմբերին Հայաստանի Նախագահի նախաձեռնությամբ սկիզբ առած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցությունները, ապրիլին նախաստորագրվեցին, իսկ հոկտեմբերի 10-ին Յյուրիխում ստորագրվեցին Հայաստանի և Թուրքիայի միջև Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին և Հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունները: Արձանագրությունները հստակ սահմանեցին հարաբերությունների կարգավորմանն ուղղված միջոցառումներն ու դրանց իրականացման ժամանակացույցը: Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու Հայաստանի նախաձեռնողական քայլերը արժանացան միջազգային հանրության անվերապահ աջակցությանը:

Արձանագրությունների շուրջ Հայաստանում ընթացան քննարկումներ, նույն նպատակով Հանրապետության Նախագահը աննախադեպ համասփյուռքյան ուղևորություն կատարեց դեպի աշխարհի հայաշատ գաղթօջախներ /Փարիզ, Նյու Յորք, Լոս Անջելես, Բեյրութ, Ռոստով/:

Տարին կարևորվեց երկկողմ բարձրաստիճան հանդիպումներով. տեղի ունեցավ Նախագահների երկու հանդիպում՝ մայիսի 7-ին Պրահայում և հոկտեմբերի 14-ին՝ Բուրսայում: Հունվարի 29-ին Դավոսի համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում հանդիպեցին նաև Նախագահ Սերժ Սարգսյանը և Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

Ապրիլի 16-ին, ՄՕՏՀԿ ԱԳ նախարարների 20-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով, Երևան էր ժամանել ԹՀ ԱԳ նախարար Ալի Բաբաջանը, որն իր այցելության ընթացքում հանդիպումներ ունեցավ նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Տարվա ընթացքում տեղի են ունեցել ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի բազմաթիվ հանդիպումները ԹՀ նախարար Ալի Բաբաջանի և երկու հանդիպում /Բուրսա՝ 14 հոկտեմբերի և Աթենք՝ 1 դեկտեմբերի/ ԹՀ նախարար Ահմետ Դավլաթօղլուի հետ:

Նոյեմբերի 21-ին Մոսկվայում տեղի ունեցած ՄՕՏՀԿ Խորհրդարանական վեհաժողովի 34-րդ լիագումար նիստի աշխատանքների ընթացքում ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը հանդիպում ունեցավ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մեհմեդ Ալի Շահինի հետ:

ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

2009թ. ընթացքում կայացան մի շարք կարևորագույն այցեր, որոնք նոր լիցք հաղորդեցին հայ-արաբական համագործակցության ընդլայնմանը և ամրապնդմանը: Տարին նշանավորվեց բարձր մակարդակի այցելություններով և երկկողմ հարաբերությունները կանոնակարգող միջպետական ու միջգերատեսչական փաստաթղթերի ստորագրմամբ, մասնավորապես՝ ՀՀ Նախագահը նոյեմբերի 3-5 պետական այցով գտնվում էր Քուվեյթում, որն առաջինն էր Հայաստանի անկախությունից ի վեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2010թ. Երևանում և Քուվեյթում դեսպանություններ հիմնելու մասին: Այցի ընթացքում կնքվեցին 6 համաձայնագրեր:

Հունիսի 17-18-ը ՄԱՀ նախագահ Բաշար Ալ-Ասադի պաշտոնական այցը Երևան նոր էջ բացեց հայ-սիրիական միջպետական հարաբերություններում: Երկու անգամ Հայաստան է այցելել ՄԱՀ արտգործնախարար Վալիդ Մուալիմը: Երևանում կայացավ է հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողովի հինգերորդ նիստը:

Լիբանանի հետ Հայաստանի հարաբերությունների բարձր մակարդակը վերահաստատվեց ս.թ. հոկտեմբերի 6-ին համահայկական շրջագայության շրջանակներում Բեյրութ այցելության ընթացքում այդ երկրի նորընտիր ղեկավարության հետ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ունեցած շփումներով:

Մ.թ. փետրվարի 23-28-ը ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը այցեր կատարեց Եգիպտոս, Հորդանան, Լիբանան և Սիրիա, հանդիպումներ ունենալով այդ երկրների ղեկավարության և արտգործնախարարների հետ:

Աշխուժություն արձանագրվեց Ծոցի արաբական երկրների հետ հարաբերություններում. 2009թ. հունվարին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի Կատարի Պետություն և Արաբական Միացյալ Էմիրություններ (ԱՄԷ) կատարած այցերը գործնական հիմքերի վրա դրեցին երկկողմ հարաբերությունների հետագա առաջխաղացումը: Ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում ձևավորվեց հայ-կատարական միջկառավարական համատեղ հանձնաժողով: Հունիսին Երևան այցելեց ԱՄԷ ԱԳ նախարար շեյխ Աբդալլահ բին Ջալեդ Ալ Նահայանը: Դեկտեմբերի 5-7-ը տեղի ունեցավ ԱՄԷ ԱԳ պետնախարար Անվար Գարգաշի, իսկ մարտի 4-6-ը՝ ԱՄԷ արտաքին առևտրի նախարար Շեյխա Լուբնա Բինթ Խալեդ Ալ Կասիմիի այցելությունները Հայաստան:

Դեկտեմբերին Փարիզում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ԱԳ նախարարների համաժողովի շրջանակներում տեղի ունեցավ Հայաստանի և Մարոկկոյի ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանի և Ֆասի Ֆիհրիի հանդիպումը:

ԿԱՆԱԴԱ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվեց քաղաքական երկխոսությունը Կանադայի հետ: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 64-րդ նստաշրջանի և Կորֆուում կայացած ԵԱՀԿ արտգործնախարարների հանդիպման շրջանակներում տեղի են ունեցել Հայաստանի ու Կանադայի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի և Լորենս Քաննոնի հանդիպումները:

2009թ. հայ-կանադական գործարար համագործակցությունը հիմնականում զարգացել է հանքարդյունաբերության, շինարարության, էներգետիկայի, ոսկերչության և թեթև արդյունաբերության բնագավառներում: Գործակցական կապեր են հաստատվել նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ասպարեզում:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվեցին զարգանալ հարաբերությունները Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի հետ՝ առևտրական, տնտեսական, միջխորհրդարանական, մշակութային և այլ բնագավառներում: Կարևոր իրադարձություն էր 2009-ին Երևանում Արգենտինյան Հանրապետության դեսպանության բացումը, որն առաջինն է հարավկոկասյան տարածաշրջանում:

ԱՄԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Տարին նշանավորվեց սեպտեմբերի 17-18-ը Սինգապուրի ավագ նախարար Լի Քվան Յուի Հայաստան կատարած այցով: Տեղի ունեցան ՀՀ ԱԺ նախագահի Կորեա /2-7 դեկտեմբերի/ և ԱԳ նախարարի՝ Չինաստան /10-14 սեպտեմբեր/ ու Ճապոնիա /25-28 նոյեմբեր/ այցերը:

Ակտիվ շփումներ են տեղի ունեցել ՉԺՀ-ի հետ երկկողմ տնտեսական հարաբերություններում, մասնավորապես շարունակվել են աշխատանքները «Շանհայ էքսպո-2010» միջազգային ցուցահանդեսին Հայաստանի մասնակցության հետ կապված հարցերի շուրջ, ինչպես նաև «Շանսի-Նաիրիտ» համատեղ ձեռնարկության շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու և գործարկելու ուղղությամբ: Մեկնարկել է ճապոնական «Շիմիզու» կորպորացիայի կողմից իրականացվող Երևանում Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրում կենսագազի հավաքում ՄՁՄ (Մաքուր զարգացման մեխանիզմ) նախագիծը:

Հետագա զարգացում է ապրել տնտեսական համագործակցությունը Հնդկաստանի հետ: Վերջինիս աջակցությամբ որոշում է ընդունվել Երևանում ստեղծել տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն: Երևանում կայացել է հնդկական արտադրանքի 2 ցուցահանդես-վաճառք:

Տարին հազեցած էր կրթական և մշակութային միջոցառումներով: Մշակութային համագործակցության շրջանակներում կազմակերպվել են Չինաստանի մշակութային օրեր Երևանում: ՉԺՀ, Հնդկաստանի և Ճապոնիայի հետ իրականացվել են կրթական համատեղ ծրագրեր, տեղի են ունեցել կորեական պարային համույթի համերգներ Երևանում:

Միջազգային կազմակերպությունների շրջանակներում տեղի են ունեցել արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները Ավստրալիայի արտգործնախարար Ստեֆեն Սմիթի, ինչպես նաև Կամբոջայի արտգործնախարար Նամհոնգ Հոռի հետ:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միավորված Ազգերի Կազմակերպություն

2009թ. սեպտեմբերի 25-29-ը ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 64-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկումներին: ՀՀ արտգործնախարարը ելույթ է ունեցել ԳԱ նստաշրջանում, հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի հետ: Նյու-Յորքում նախարար Նալբանդյանը մասնակցել է նաև ՀԱՊԿ անդամ երկրների արտգործնախարարների հանդիպմանը: Սեպտեմբերի 29-ին ԱԳ նախարար Նալբանդյանը Նյու Յորքում ստորագրեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի թիվ 63/122 բանաձևով ընդունված «Ամբողջովին կամ մասամբ ծովով ապրանքների միջազգային փոխադրման համար պայմանագրերի վերաբերյալ» կոնվենցիան և «ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը»:

ՀՀ մասնակցությունը ՄԱԿ-ի տարբեր մարմիններում

2009-ին ՀՀ շարունակել է աշխատանքները հետևյալ հանձնաժողովներում և կոմիտեներում.

- Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովում (2007-2011թթ.), Հայաստանն ընտրվել է 2010-2011թթ. համար (54-րդ և 55-րդ նստաշրջաններ) ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի նախագահող երկիր,
 - Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովում (UNCITRAL) – (2007-2012թթ.),
 - Ծրագրման և համակարգման կոմիտեում (2009-2011թթ.),
 - Վիճակագրության հանձնաժողովում (2009-2012թթ.),
 - ՄԱԿ-ի բնակավայրերի ծրագրի ղեկավար խորհրդում (UN-Habitat) – (2009-2012թթ.):
- Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է նաև հունիսի 10-11-ը Նյու Յորքում կայացած ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով ԳԱ բարձրաստիճան հանդիպմանը:

Մարդու Իրավունքներ

ՀՀ դիրքորոշումները մարդու իրավունքների վերաբերյալ ներկայացվել են միջազգային այնպիսի կարևոր հավաքներին, ինչպիսիք են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանը և ԵԱՀԿ Մարդկային չափանիշների տարեկան հանդիպումը:

2009թ. նախապատրաստվել և ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսված 6 միջազգային կոնվենցիաների կատարման վերաբերյալ Ազգային զեկույցները:

2009-ին ԱՄՆ պետքարտուղարության թրաֆիկինգի վերաբերյալ ամենամյա զեկույցում Հայաստանը 2-րդ խմբի երկրների դիտարկման ցուցակից դասակարգվեց բուն 2-րդ խումբ:

ՅՈՒՆԵՄԿՕ

2009թ. հոկտեմբերին ՀՀ պատվիրակությունը ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ մասնակցեց ՅՈՒՆԵՄԿՕ-ի գլխավոր կոնֆերանսի 35-րդ նստաշրջանին: Արտգործնախարարը ելույթ ունեցավ նստաշրջանի ընդհանուր քննարկումներին և անդրադարձավ հուշարձանների պաշտպանության ոլորտում կազմակերպության պարտավորություններին՝ մատնանշելով Հին Ջուղայի խաչքարերի ոչնչացման հարցում շարունակվող անգործությանն ու անտարբերությանը: ՅՈՒՆԵՄԿՕ-ի հոբեյանների 2010-2011թթ. օրացույցում ընդգրկվել են միջնադարյան հայ մեծանուն մանրանկարիչ Թորոս Ռուսլինի ծննդյան 800 (1210-1270) և հայ մատենագրության պատմահայր Մովսես Խորենացու ծննդյան 1600 (410-493) ամյակները: Նախապատրաստվել և ՅՈՒՆԵՄԿՕ-ի կենտրոնակայան է փոխանցվել հայ ժողովրդի ոչ նյութական ժառանգության մաս կազմող խաչքարի արվեստի և հոգևոր-ծիսական նշանակության մասին ամբողջական փաթեթ, որը պետք է ընդգրկվի ՅՈՒՆԵՄԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցուցակում:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն

2009թ. դեկտեմբերի 15-16-ը Փարիզում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության արտգործնախարարների համաժողովի աշխատանքներին մասնակցել է և ելույթով հանդես է եկել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: Հունիսի 9-ին ստորագրվեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Հայաստանի պաշտոնյաների ֆրանսերեն լեզվի վերապատրաստման ծրագրի մեկնարկի վերաբերյալ հուշագիրը, որի համաձայն շուրջ 50 պաշտոնյաներ կկատարելագործեն ֆրանսերենի իրենց գիտելիքները:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն

2009թ. առաջին կիսամյակում ՀԱՊԿ շրջանակներում գործունեությունը շարունակվեց ընթանալ ՀՀ նախագահության ներքո:

2009թ. փետրվարի 4-ին Մոսկվայում գումարված ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի արտահերթ նստաշրջանի, 2009թ. ապրիլի 16-ին Երևանում կազմակերպված ՀԱՊԿ Արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստի, 2009.թ. հունիսի 14-ին Մոսկվայում տեղի ունեցած ՀԱՊԿ ԱԳՆԽ հերթական նիստի ընթացքում ստորագրվեցին տասնյակ փաստաթղթեր եւ ընդունվեցին առանցքային որոշումներ կազմակերպության գործունեության եւ արդյունավետության որակապես նոր աստիճանի բարձրացման վերաբերյալ: Կազմակերպությունում Հայաստանի նախագահությունը նշանավորվեց, մասնավորապես, անդամ պետությունների նախագահների կողմից „ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի մասին, համաձայնագրի ստորագրմամբ:

2009թ. մայիսի 15-16-ին Երեւանում ՀՀ ԱԳՆ աջակցությամբ ՀՀ Անվտանգության խորհրդի հովանու ներքո եւ ՀԱՊԿ ծրագրերի շրջանակներում անցակցվեց Կովկասում անվտանգությանը եւ համագործակցությունը նվիրված միջազգային գիտաժողով:

2009թ. ընթացքում անդամ պետությունների արտաքին գործերի նախարարները հանդիպել են նաեւ սեպտեմբերին՝ Նյու Յորքում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 64-րդ նստաշրջանի նախօրեին, և դեկտեմբերին՝ Աթենքում, ԵԱՀԿ նախարարական հանդիպման նախօրեին:

2009թ. հունիսի 31-ից օգոստոսի 1-ը Ղրղզստանի Հանրապետությունում կայացավ ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովը:

2009թ. սեպտեմբերի 26-ից հեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում ՀԱՊԿ շրջանակներում անցկացվեց համատեղ համալիր գորավարություն, ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ներգրավմամբ, որի ակտիվ փուլի դիտարկմանը Ղազախստանում հոկտեմբերի 16-ին մասնակցեց նաև ՀՀ Նախագահը:

Հայաստանում կազմակերպված բոլոր միջոցառումներին ներկա է գտնվել ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան, որը Երեւան է այցելել հինգ անգամ:

Տարվա ընթացքում կազմակերպված միջոցառումներին Հայաստանը մասնակցել է ՀՀ Նախագահի, ինչպես նաև արտգործնախարարի, ԱԽ քարտուղարի, պաշտպանության նախարարի եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով:

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

2009թ. մայիսի 4-ին Հյուսիսատլանտյան խորհրդում հաստատվեց ՀՀ-ՆԱՏՕ 2009-2010թթ. նորացված Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը:

Մայիսի 20-ին Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը և պաշտպանության Նախարար Մեյրան Օհանյանը մասնակցեցին 28+1 ձևաչափով Հյուսիսատլանտյան խորհրդի նիստին, որի շրջանակներում հանդիպեցին կազմակերպության գլխավոր քարտուղարին: Ապրիլին կայացավ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ Կլաուդիո Բիզոնյերոյի գլխավորած պատվիրակության, իսկ նոյեմբերին՝ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսը այցերը Հայաստան:

Հայաստանը շարունակել է Դաշինքի ուժերի կազմում միջազգային խաղաղապահ առաքելություններին մասնակցությունը: Կոսովոյում է տեղակայված ՀՀ զինված ուժերի 70 հոգանոց զորակազմը: Իսկ 2009թ. սկիզբ առան Աֆղանստանում Միջազգային անվտանգության ապահովման ուժերին ՀՀ մասնակցությանն ուղղված նախապատրաստական աշխատանքները:

2009թ. հոկտեմբերին Հայաստանում անցկացվեց «ՆԱՏՕ-ի շաբաթ» հերթական երրորդ միջոցառումը:

Սովորական սպառազինությունների վերահսկման խնդիրներ

Համաձայն Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրով նախատեսված 2009թ. հունվարի 1-ի դրությամբ տրամադրված զինված ուժերի վերաբերյալ տարեկան տեղեկատվության, Ադրբեջանը, ինչպես և նախորդ տարիներին, կրկին գերազանցում է իր թույլատրելի նշաձողը՝ տանկերի և հրետանու ենթաբաժիններում: ԱԳ նախարարությունը տարբեր միջազգային ասոցիացիաներում շարունակել է բարձրացնել Ադրբեջանի կողմից ԵՍՁՈԻ պայմանագրով նախատեսված սովորական սպառազինությունների գերազանցման խնդիրը: Մասնավորապես, ԵԱՀԿ-ում Հայաստանի պատվիրակությունը Համատեղ խորհրդատվական խմբի նիստերի ընթացքում բազմիցս անդրադարձել է Ադրբեջանի կողմից ԵՍՁՈԻ պայմանագրի բացահայտ խախտման փաստերին: Նշյալ խնդիրը քննարկվել է նաև ՄԱԿ-ի Առաջին կոմիտեի հանդիպումներին, ինչպես նաև արձարձվել է Աթենքում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի ելույթում ԵԱՀԿ Նախարարական խորհրդի նիստին:

Գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրներ

2009-ին շարունակվեց նախորդ տարում Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) և Հայաստանի միջև ստորագրված Հայկական ԱԷԿ ֆիզիկական պաշտպանության համակարգի

բարելավմանն ուղղված 1 580 000 եվրո արժողության ծրագրի իրականացումը: Հունիսին ԱԷՄԳ Տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Երևանում կայացավ Վերամշակման ու պահեստավորման համար նախատեսված կառույցների մոդուլյար նախագծման և թափոնների վերամշակման գործում շարժական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ տարածաշրջանային սեմինար, որին մասնակցեցին շուրջ 15 երկրների ներկայացուցիչներ: Սեպտեմբերին ՀՀ պատվիրակությունը Էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի գլխավորությամբ մասնակցեց Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության 53-րդ տարեկան համաժողովի աշխատանքներին: 2009թ. նոյեմբերին կայացավ Քիմիական զենքի արգելման կազմակերպության (ԲԶԱԿ) գլխավոր տնօրեն Ռոխելիո Պֆիրտերի առաջին այցը Հայաստան: Նա հանդիպեց ՀՀ ԱԳ և արտակարգ իրավիճակների նախարարների հետ:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարին նշանավորվեց Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում Հայաստանի հաջողված նախագահությամբ (2008թ. նոյեմբեր - 2009թ. ապրիլ): Կազմակերպվել են 50-ից ավելի միջոցառումներ՝ նախարարական հանդիպումներ, ավագ պաշտոնյաների կոմիտեի նիստեր և այլն:

Ապրիլի 16-ին Երևանում կայացավ ՄՕՏՀ արտգործնախարարների խորհրդի 20-րդ նիստը, որին մասնակցեցին պատվիրակություններ կազմակերպության անդամ 12 երկրներից, 9 դիտորդ և ներկայացուցիչներ գործընկեր երկրներից, ՄՕՏՀ կառուցվածքային կազմակերպություններից և միջազգային կազմակերպություններից:

ՀՀ ակտիվորեն մասնակցել է ՄՕՏՀ նախագահության, Սևծովյան առևտրի և զարգացման բանկի, Սևծովյան ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի, Գործարար խորհրդի, Նախագծերի զարգացման հիմնադրամի և այլ մարմինների հետ գործունեությանը: Հայկական պատվիրակությունները մասնակցել են ՄՕՏՀ նախարարական հանդիպումներին, աշխատանքային խմբերի նիստերին և այլ միջոցառումներին:

Հայաստանի պատվիրակությունը՝ ԱԳ նախարարի տեղակալ Արման Կիրակոսյանի գլխավորությամբ մասնակցել է հոկտեմբերին Բաքվում կայացած ՄՕՏՀ արտգործնախարարների խորհրդի նիստին:

2009թ. սեպտեմբերին ՀՀ կառավարությունը միացել է ՄՕՏՀ Նախագծերի զարգացման հիմնադրամին:

Մարտին և ապրիլին Հայաստան այցելեց ՄՕՏՀ գլխավոր քարտուղար Լեոնիդաս Քրիզանթոպուլոսը:

Հայաստանը դիտորդի կարգավիճակով մասնակցել է Եվրասիական Տնտեսական Ընկերակցության (ԵՎԸԱԶԵՍ-ի) աշխատանքներին: 2009 թ. ԵՎԱԶԵՍ-ի շրջանակներում ստեղծվել են «Հակաճգնաժամային հիմնադրամը» և «Բարձր տեխնոլոգիաների կենտրոն», որոնց համահիմնադիր է հանդիսացել նաև Հայաստանը:

ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸԱՆԱԶՈՒՄ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը շարունակում է մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում:

2009 թ. հունվարին Հայաստանի պատվիրակությունը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արման Կիրակոսյանի գլխավորությամբ ակտիվ մասնակցություն է ունեցել ՄԱԿ-ի ժնևյան կենտրոնակայանում կայացած «Ցեղասպանության կանխարգելում» գիտաժողովին, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից՝ ի կատարումն 2008 թ. Հայաստանի նախաձեռնությամբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդում ընդունված «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևի:

Ապրիլին աշխարհի տասնյակ քաղաքներում տեղի ունեցան Հայոց ցեղասպանության 94-րդ տարելիցին նվիրված ոգեկոչման միջոցառումներ, մի շարք երկրներում՝ բարձրաստիճան պաշտոնյաների և հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Տարվա ընթացքում ցեղասպանության հարցը ավելի լայն տարածում գտավ միջազգային լրատվական դաշտում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ Նախագահը հարցազրույցներ է տվել BBC հեռուստառադիոընկերությանը, Euronews, PTP և Russia Today հեռուստաընկերություններին, և The Wall Street Journal պարբերականին: Նախագահ Սերժ Սազյանը մասնակցել է Դավոսի համաշխարհային տնտեսական ֆորումին և Անվտանգության քաղաքականության հարցերով Մյունխենի համաժողովին:

Փարիզում լույս տեսնող «Միջազգային քաղաքականություն» (Politique Internationale) հանդեսն իր փետրվարյան համարում ավելի քան 100-էջանոց հատուկ բաժին է նվիրել Հայաստանին:

Հոկտեմբերին ֆրանսիական Paris Match պարբերականը Հայաստանի մասին հատուկ ներդիր է հրապարակել՝ 2.500.000 օրինակով:

2009 թ. ՀՀ ԱԳ նախարարը Հայաստանի արտաքին քաղաքականության մասին ելույթներով հանդես է եկել Փարիզի միջազգային ակադեմիայում, Վարշավայի համալսարանում, Պեկինի միջազգային հետազոտությունների ինստիտուտում, Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանի Միջազգային և հանրային հարաբերությունների դպրոցում, Հռոմի միջազգային հարաբերությունների ինստիտուտում, Տոկիոյի միջազգային հարաբերությունների ինստիտուտում:

Միջազգային տարբեր համաժողովներում, քաղաքագիտական կենտրոններում, սեմինարներին, կլոր սեղաններին ելույթներով հանդես են եկել ՀՀ ԱԳ նախարարը, նախարարի տեղակալները, դեսպաններն ու գլխավոր հյուպատոսները:

Արտգործնախարարը մասնակցել է շուրջ 4 տասնյակ ասուլիսների, 20-ից ավելի հարցազրույց է տվել աշխարհի առաջատար լրատվամիջոցներին:

ԻՐԱԿԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի ընթացքում ստորագրվել է մոտ 100 միջազգային պայմանագիր: ՀՀ Նախագահի հաստատման է ներկայացվել 38 միջազգային պայմանագիր, որոնցից հաստատվել է 32-ը: ՀՀ Ազգային ժողովի վավերացման է ներկայացվել 54 միջազգային պայմանագիր, որոնցից վավերացվել է 35-ը: 2009 թվականի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը իրականացրել է 300-ից ավելի միջազգային պայմանագրի նախագծերի մշակման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված տարբեր գործառույթներ: ՀՀ ԱԳՆ կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկման են ներկայացվել մի շարք իրավական ակտերի նախագծեր: Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրեր» պաշտոնական տեղեկագրում 2009 թվականին ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերի հրապարակման գործընթացը:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2009թ. շարունակվել են աշխատանքները օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները վերականգնելու, օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև տարաբնույթ այլ հարցերում աջակցելու ուղղությամբ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի 1390-Ն որոշմամբ օտարերկրյա պետություններում հեշտացված կարգով ՀՀ քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումներն ընդունելու լիազորությունը վերապահվել է ՀՀ դեսպանություններին և հյուպատոսական հիմնարկներին:

Եվրոպական հանձնաժողովի պաշտոնյաների հետ քննարկվել է ԵՄ երկրների կողմից ՀՀ քաղաքացիներին մուտքի վիզաների տրամադրման դյուրացման խնդիրը: Գործընթացը նախատեսվում է նաև Արևելյան գործընկերության նախաձեռնության շրջանակներում:

2009թ. տարեվերջին հաստատվել է հյուպատոսական ոլորտում իրավական, վարչարարական և կազմակերպչական համալիր բարեփոխումների ծրագիր, որը նախատեսում է հյուպատոսական բնույթի ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացում, ընթացակարգերի պարզեցում, գործընթացների կառավարման և վերահսկման մեխանիզմների կատարելագործում:

Կանոնակարգվել է արտերկրում ՀՀ պատվավոր հյուպատոսների աշխատանքը, նրանց հետ կնքվել են պայմանագրեր:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու տարում՝ ԵԱՀԿ և ԵՄ աջակցությամբ հիմնադրվեց ԱԳՆ դիվանագիտական դպրոցը: 2009 թ. իրականացվել են անձնակազմի ատեստավորման և դասային աստիճանների շնորհման, պաշտոնային առաջխաղացման և օտար լեզուների ստուգման, վերապատրաստման, ռոտացիայի, գործուղումների և այլ ուղղությամբ աշխատանքներ: